

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/4

30 մայիսի 2017թ.

Քննարկվեց «ԹԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ կողմից լրացուցիչ հաշվարկված պարտավորությունների դեմ:

«ԹԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

«ԹԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) կողմից 2016թ. 1-ին և 2-րդ եռամսյակներում ԱԱՀ-ի հաշվետվությունները եռամսյակային կտրվածքով ներկայացվելու փոխարեն դրանք ներկայացվել են ամսեկան կտրվածքով: Ընդ որում, ԱԱՀ-ի գծով առաջացած պարտավորությունները նույնպես վճարվել են ամեն ամիս, այսինքն՝ ժամկետից շուտ: Այդ պատճառով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն Էրեբունու ՀՏ-ում հաշվարկվել է տուգանք և ընկերության ԱԱՀ-ի դեբետային մնացորդից պակասեցվել է 1.008.360 դրամ գումար:

Նկատի ունենալով, որ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը նմանատիպ դեպքերի հետ կապված նախկինում կայացրել է մի շարք որոշումներ ի օգուտ հարկատուի, ընկերությունը խնդրում է վերացնել (անվավեր ճանաչել) Էրեբունու ՀՏ կողմից «ԹԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 1.008.360 դրամ տուգանքը և այն վերականգնել ընկերության հաշվառման քարտում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԹԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ-ն 2016թ. ընթացքում հանդիսացել է ավելացված արժեքի հարկի եռամսյակային կտրվածքով հաշվարկներ ներկայացնող, քանի որ 2015թ. իրացման շրջանառությունը չի գերազանցել 100 մլն դրամը: Սակայն 2016թ. հունվարից մինչև հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից ներկայացվել են ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ կողմից ընկերությանը տեղեկացվել է ԱԱՀ-ի հաշվարկներն եռամսյակային կտրվածքով ներկայացնելու անհրաժեշտության մասին: Արդյունքում, ընկերության կողմից ներկայացված դիմումի հիման վրա չեղյալ են ճանաչվել 2016թ. հունվար ամսից մինչև հուլիս ամիսն ընկած ժամանակահատվածի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկները: Այնուհետև 07.09.2016թ. ընկերության կողմից ներկայացվել են 2016թ. 1-ին և 2-րդ եռամսյակների ԱԱՀ-ի հաշվարկները: Հաշվի առնելով նշված հանգամանքը 20.04.2016թ. մինչև 07.09.2016թ. ընկած ժամանակահատվածի համար Էրեբունու ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 1.008.360 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովն իր դիրքորոշումը բազմիցս արտահայտել է նմանատիպ գործերով կայացված որոշումներով:

Այսպես, Հանձնաժողովն արձանագրում է, որ ընկերության կողմից ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներ ներկայացնելու փոխարեն ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու պայմաններում պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել, այսինքն՝ դրա հետևանքով պետական բյուջե պակաս ԱԱՀ-ի գումար չի վճարվել: Ընդհակառակը, ԱԱՀ-ի ամսական հաշվարկներ ներկայացվելու արդյունքում ընկերության կողմից ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարվել են սահմանված ժամկետից շուտ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկի հաշվարկներն ընկերության կողմից ամսական կտրվածքով ներկայացվել են թյուրիմացության հետևանքով, որի արդյունքում վերոգրյալ ժամանակահատվածում ընկերության կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարների չափը չի փոփոխվել: Այսինքն, թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը եզրակացնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«ԹԻ ԵՎ ԼԻ» ՍՊԸ-ի անձնական հաշվի քարտից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքը՝ գումարով 1.008.360 դրամի չափով:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

